զատ ուրիշ որեւէ մէկի չե՛մ սիրի երբեք։

Ապա ես կ'անցնեմ խնձոր-խաղողի դրախտ երկիրը եւ կը յաջչտակեմ ընկեր լինելու քաղցրը պտուղը։ Իմ ծոցիս դրած կը բերեմ քեզ մօտ, երկու հաւասար մասի կը կիսեմ ու Արմենոստանի անոյշ գինիով անոյշ կ'անենք այն եւ այլեւս երբեք, երբեք չե՛նք դադրի իրար սիրելուց։

Ապա ապահով ամէն չարիքից՝ կը կապեմ ես իմ Հատու Սուրբերս, եւ դու կը հաղնես կապոյտ բեհեզդ՝ մեծ կաթնաղեսի վարար ափերով դէպի վեր կ'ելնենք, նստած ոսկեթաչ նըժոյգի վրայ, դէպի վե՛ր կ'ելնենք։

Օ՜, մեր նժոյգն ինչպէս արա՜գ, արա՛գ կը թռչի. մարդիկ նայելով նրա յետեւից բարձրացող փոշուն՝ իրար մէջ կ'ասեն. «Ո՛հ, էլի՜ շարժուեց թշնամու զօրքը, ի՛նչ անենք հիմա»... Բայց մենք կը բարձրանանք, կը բարձրանանք դէպի մեղրահոս յատակ հոսանքը։

Եւ երբ կը հասնենք նրա ակունքին՝ աւազների ոսկի փոշու մէջ կը չինենք մենք մեր ըիւրեղեայ-արմատ սիրուն տնակը եւ նրա մէջ կը դիպենք այդ մեծ խոր գետի յատակից հանած գոհար քարերը, զմրուխտ գանձե՜ր։

Եւ կը տնկենք էլ նրա զոյգ ափին երկու արմատի սիրեցնող ծառեր։ Եւ նրանք կ'աճեն, շուտով կ'ուռճանան մեր սիրոյ ոյժով եւ շաքարի պէս նոյշ պտուղներ կը տան։ Եւ նրանց հետ մէկտեղ մենք անոյշ կ'անենք իրար շաքարհունց ալուան շուրթերը։

Եւ երբ մենք արդէն իրար շատ ու շատ սիրած ու գգուած, փայփայած կը լինենք, եւ երկինքն էլ այլեւս իր չար նախանձը չի կարող զսպել,— օ՜, Արեւելքի երկինքը վառ-վառ խանդոտ է ու չար,— խանդից կուրացած փայլակ-կայծակով կ'ուզի խանդարել մեր սէր ու խինդը։ Եւ երբ մեր սէրը կը յաղթի նրան՝ օ՜, անմիտ թշնամու յորդ արցունքները կը սկսին հեղուել եւ կը հեղեղեն մեր տունն ու տեղը եւ մեզ կը քշեն գետի խոր տեղը։ Ես քեզ գիրկ առած՝ կ'ընկնեմ գիժ գետի սահանք-հոսանքի, յորձանքների մէջ եւ ուշ գիշերից կը պայքարեմ նրանց հետ մինչ այդ, մինչ առաւօտեան ջինջ աղջամուղջին ես քեզ կը հասցնեմ սիրուց ժպտացող մի նո՜ր աշխարհի հէքեաթ ափերը, բալի՛կ, սիրոյ ժպտացող մի նո՜ր աշխարհի հեքեաթ ափերը։

Ընկեր դարձիր մէ՜կ ու յետո՛յ տես՝ ինչպէ՞ս եմ սիրում, սիրուն մանկիկիս ինչպէ՜՞ս եմ սիրում...

ԱՆՑՈՐԳԸ ԵՒ ԻՐ ՃԱՄԲԱՆ

(ԲԱՆԱՍՏԵՂԾԻ ՑՈՒՇԱՏԵՏՐԻՑ)

Գրեց՝ ԿՈՍՏԱՆ ՉԱՐԵԱՆ

ՁՏՈՒՄ

Մե՛ծ լուր։

Որոշուած է կատարել պրոֆմիութիւնների անդամների զտումը։ Անմիջապէս։ Ամենախիստ կերպով։

Գեղաշիսը՝ Պետթատրոնում։ Լուսաշիսը՝ այստեղ եւ այնտեղ։ Անողոքօրէն։ Քննել, զննել, մաքրել։

Բոլոր ընկերները ենթարկուած են զօրակոչի։ Զեկայի տեղեկութիւնները շտապ դասաւորւում են։ Տեղեկատուները, որսի շունների նման, լեզուները դուրս, աչքերը սրած, շրջում են փողոցներում, պտտում տների շուրջը, ականջ կախում, պատուհաններից ներս նայում, դռների առջեւ կանգ առնում, փսփսում, արձանագրում։

Ժողովներ, վիճաբանութիւններ, թղթերի վրայ կարմիր մելանով շարաբաստիկ նշաններ։

Զտո՛ւմ։

Համալսարանի դասախօսները Արուվեան փողոցի դարիվերը բարձրանում են կապարեայ ոտքերով։ Ծանր։ Քայլերը ծուում են, խաչ-